# «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1219-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

<u>**Նախագիծ**</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**N -Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1219-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, ինչպես նաև «Ոստիկանության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի «**Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հրազենի պահեստամասերի, սարքավորումների և օժանդակ միջոցների ցանկը հաստատելու մասին**» թիվ 1219-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

- Որոշման վերնագրից, 1-ին և 2-րդ կետերից հանել □Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության□ բառերը,
- Որոշման նախաբանը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

□«Ոստիկանության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***□,

- Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը

հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ն. ՓԱՇԻՆՅԱՆ**

**«____» _________ 2020թ.**

**Երևան**

Հավելված

ՀՀ կառավարության 2020թ.

____ ________-ի N ___-Ն որոշման

**Հավելված**

**ՀՀ կառավարության 2008 թվականի**
**հոկտեմբերի 30-ի N 1219-Ն որոշման**

**Ց Ա Ն Կ**

**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀՐԱԶԵՆԻ ՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ**

| NN | Հրազենի անվանումը | Պահեստամասերի | Սարքավորումների |
|---|---|---|---|

| ը/կ | | անվանումները | անվանումները |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1. | Մակարովի ատրճանակ | բռնակ<br>ծգան<br>փականակի արգելակիչ<br>մարտական զսպանակ<br>հետադարձ զսպանակ<br>նշանոց<br>զարկան<br>արտանետիչ<br>ապահովիչ | փամփշտատուփ<br>մաքրիչ |
| 2. | Ստեչկինի ավտոմատ գնդացիր (ՍԱԳ) | բռնակ<br>ծգան<br>փականակի կանգ<br>մարտական զսպանակ<br>հետադարձ զսպանակ<br>նշանոց<br>զարկան<br>արտանետիչ<br>ապահովիչ | փամփշտատուփ<br>մաքրիչ |
| 3. | Կալաշնիկովի ինքնաձիգ | բռնակի միացնող պտուտակ<br>ապահովիչ | կաշվե փոկ<br>պիտույքների պահատուփ |

| | | | |
|---|---|---|---|
| | | փողի պահպանակի օղակ<br>փողի պահպանակ<br>զարկան<br>արտանետիչ<br>խզակոթ<br>փողակալ<br>ատրճանակի բռնակ<br>փակաղակ<br>փողատուփի կափարիչ | խոզանակ<br>յուղաման<br>շամփուր<br>պահեստատուփ |
| 4. | Դիպուկահար հրացան | բռնակի միաց-նող պտուտակ<br>ապահովիչ<br>փողի պահպանակի օղակ<br>փողի պահպանակ<br>զարկան<br>արտանետիչ<br>խզակոթ<br>փողակալ<br>բռնակ<br>փակաղակ<br>փողատուփի կափարիչ | կաշվե փոկ<br>պիտույքների պահատուփ<br>խոզանակ<br>յուղաման<br>նշանառման սարք<br>շամփուր<br>պահեստատուփ |
| 5. | 7.62մմ, 5,45մմ տրամաչափի՝ Կալաշնիկովի ձեռքի գնդացիր | խզակոթ (միայն ԿՁԳ-ի համար) | պիտույքների պահատուփ |

| | | | |
|---|---|---|---|
| | (ԿՁԳ) | փողակալ<br><br>բռնակ<br><br>բռնակի միացնող պտուտակ<br><br>զարկան<br><br>արտանետիչ | շամփուր<br><br>փամփշտատուփ՝ 40 փամփուշտի համար<br><br>փամփշտատուփ՝ կլոր՝ 75 փամփուշտի համար<br><br>երկգլխանի յուղաման |
| 6. | Ձեռքի հակա-տանկային նռնականետ | զարկան<br><br>մարտական զսպանակ<br><br>ապահովիչ<br><br>ֆիքսատորի զսպանակ | աչքի դիտախողովակ<br><br>պտուտակահան-բանալի<br><br>հարվածածգանային մեխանիզմ<br><br>նշանոցի ստուգման սարք<br><br>բանալի<br><br>նռնականետի մաքրիչ |

: